

## ՍՈՒՐԲ ՀԱՐՔ

ԵՒ ՊԱՇԱԽԵԼԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Այսօր ձեմարանը տանում է իւր գոյութեան 15-րդ ասրեղարձը. Այդ ժամանակամիջոցում այս հիմնարկութիւնը թէ ու և թէ կարմիր օրեր է առել. Անցած արիները փորենի արիներ կարելի է անուանել. Այժմ՝ կենքի պահանջներին աւելի ծանօթ՝ ձեմարանը հանդէս է գալիս որոշ ուղղութեամբ, որոշ նպասակներով, եւ մօտիկ տպագան կարող է ցցց առլ թէ որչափ իրագործելի են այդ ձգտումները.

Դարեր անցան. Մահմետական պետքի ձեռքի տակ Հայաստանի ժողովուրդը պատրաստ էր արդէն իւր ազգայնութիւնը մոռանալ. Ցիր ու ցան եղած հայերն ոչ մի աեղ այլ ևս չեին գտնում մի որ և է ազգային հիմնարկութիւն բացի Ս. Էջմիածնից. Այն միջոցին, երբ ամէն բան, ինչ որ հայկական ծագում ունէր, աւերակ էր գարձել, միայն Ս. Էջմիածնին էր պահում հին ազգային հզգին, միայն Ս. Էջմիածնին էր միացնում բոլոր հայերի սրբաերը, միայն Ս. Էջմիածնին էր մնում կանգուը իրեւ ընդհանուր հայոց հիմնարկութիւն. Այդպէս է եղած վերջի 8—9 դարերում, պյուղէս է ներկայում էլ. Եւ այդ համայն հայոց հաստատութիւնը 15 տարի սրանից առաջ հիմնեց իրան կից ուսումնարան, որը նոյնպէս ամէն աեղերի հայերի օգտին է ծառայում, որը նոյնպէս ընդհանուր հայկական ընաւորութիւն է կրում. Ամէն լուսաւորչական հայ մանուկ, որ պետութեան էլ պատկանէ նաև կարող է տանիկ դպուհալ այս դպրոցին.

Ամենայն հայոց կաթողիկոս, ամենայն հայոց Էջմիածնին, ամենայն հայոց ձեմարանն.

Հաւատարիմ մնալով մեր հին ազգային նշանարանին՝ թէ գպրօցը եկեղեցու կախագակիթն է, այս աեղ էլ ընդհանուր ազգային եկեղեցու կից հիմնեցինք ընդհանուր ազգային ուսումնարան.

Այն գործիները, որոնք այս պատերի մէջ ստացած կը լինեն իրանց կրթութիւնը, ծառայելու են հայկական եկեղեցուն և դպրոցին ամէն աեղ, որտեղ հայ կայ.

Ձեմարանը նոր հանգամանքների պահանջ էր. Կար ժամանակ, երբ աւանց գիտութեան, առանց երկարամեայ նախապատրաստութեան կարելի էր կառավարիչ լինել. Քարոզիչ, ժողովրդի բարյականութեան ղեկավար և մինչև անգամ ուսուցիչ, Այդ օրերն անցան և իւր ընդհանուր հայկական քաղաքականութիւնը առաջ տանելու համար Ս. Էջմիածնը պիտի դիմէր գիտութեան. Արկնում եմ՝ ձեմարանի հիմնելը անհրաժեշտ էր.

Մեղ հարկաւոր էին կրթուած առաջնորդներ, յաջորդներ, նուիրակներ,

Ս. Էջմիածինը՝ լինելով աղօթառեղի։ Միևնոյն ժամանակ ու նախ և առաջ վարչական կենարոն է։ Խըր ոյժը բանեցնելու, իւր կարգադրութիւնները Տերաւոր անդերում իրադորեսուած առնելու, ընդհանուր Հայկական հոգեւոր կեանքին ուղղութիւն առլու Համար Մոյր Աթոռը չեր կարող չըցանկանալ պատրաստել կրթուած ստորագրեալներ։ ուսում առած հոգեւորականներ։ մանաւանդ կուսակրօններ։

Դրանք պիտի գիտակցաբար ուսուց ուսնեին վարչական գործը։ Հիմա չեր կարելի, ինչպէս առաջ՝ նախընթաց դարերում։ յայս դնել միմայն ընածին առանդի։ բնածին խելքի վերոյ։

Այս պետութիւնները որտեղ գտնվում են ոյժմ Հոյերը, 19-րդ դարում աշխատեցին օրէնքով որոշել Հայ հոգեւորականի գործունեումնեան շրջանը։ Հարկաւոր էր լաւ ուսումնասիրել այդ օրէնքները, որ եկեղեցու և պետութիւնների մէջ եղած յարաբերութիւնները յաճախ արաձայնութիւնների չը ենթարկուեին։ Միւս կաղմբց՝ հարկաւոր եղաւ եկեղեցականութեան ներքին վարչական կազմակերպութեան մէջ էլ փափութեան մացնել, Ըփուելով եւրոպական կեանքի ուժեղ հօսանքին, ստիպուած էինք աւելի ամուր և պարզ որոշած կազմակերպութիւն առ մեր հոգեւորականութեանը։ Ահա որտեղ պէտք եկաւ նորից եկեղեցական իրաւունքի մանրամասն ուսումնասիրութիւնը։ Առանց գիտութեան չեր կարելի յաջողութեամբ կառավարել։

Մեզ հարկաւոր էր ձեմարանը, որովհետեւ քարոզչական գործն օրըստ օրէ աւելի պահանջ էր դառնում Հայկական կեանքի Համար։ Ամէն աեղ՝ թէ Տաճկասանում, թէ Պարսկասանում ու Հնդկասանում և թէ Ռուսասանում տարի չէր անցնում։ Հիմա էլ չէ անցնում։ որ Հայ լուսաւորչականներից մի քանի հարիւր տուն ուրիշ գաւանութեան չըդիմեն։ Մարդորսների թիւը՝ քանի գնում է, աւելանում է մեր մէջ և այդ դէպքում կաթոյիկի հետ մրցում է բողոքականը, բողոքականի հետ անդիմականը։ Հարկաւոր էր վերջապես պատրաստել քարոզիչներ, եկեղեցու պաշտպաններ և դրանք պիտի կրթուած լինեին։ որովհետեւ մեր հակառակորդները եւրոպական աստուածաբանութեան բոլոր նրբութիւններով են զինաւորուած։ Եւ գուցէ այդ քարոզիչները ապագայում մի ուրիշ աւելի մեծ դեր խաղան Հայոց կեանքի մէջ և աւետարանական սիրոյ վարդապետութիւնը տարածեն նրանց մէջ էլ, որոնց սիրտն ու միտքը դեռ ևս խաւարով է պատաժ։ Առանց կրթուած քարոզիչների Հայ աշխարհի կեանքը հաստատուն չէ։

Մեզ հարկաւոր էր ձեմարանը և նրա Համար։ որ մենք ինքներս գիտակցաբար հետեւնք մեր դաւանութեան սկզբունքներին։ Հայերի մէջ շատ քչերը գիտեն։ թէ ինչքն մէկ զանազանվում մենք ուրիշ քրիստոնեայ եկեղեցիներից, շատ քչերը գիտեն։ թէ ինչպէս է մեր դաւանութիւնը

զարդացել՝ Զարմանալի էլ չէ՝ քանի որ գեռ ո՛չ մեր քրիստոնէականն ո՛չ էլ մեր եկեղեցական պատմութիւնը մշակուած չեն։ Ա՞վ պիտի մեր ժողովորդը ծանօթացնէ նրա կրօնի հետ նրա եկեղեցու անցեալի հետ ո՞վ պիտի սովորեցնէ նրան հետևել Աւետարակի գաղափարներին մեր եկեղեցու հոգուն համաձայն եթէ ո՛չ կրթուած հօգևորականը։

Այս մեզ հարկաւոր էր ձեմարանը. այդտեղից պիտի դուրս գային կրթուած կառավարիչները կրթուած քարոզիչներ կրթուած հովիւներ և ոչ թէ միմիպյն մէկ պիտութեան հպատակ հայերի համար այլ աշխարհիս բոլոր հայերի համար ։ Բացի սրանից ձեմարանը պիտի տայ մեզ եւ մշակուած պատմութիւն եւ մշակուած լեզու։

Մեր եկեղեցական պատմութիւնն այնպէս սերտ կապով միացած է մեր քաղաքական անցեալի հետ որ եւրոպական գիտնականներից շատերը մեզ մի եկեղեցական ազգ են անուանում ։ Քանի որ կենդանի կայ հայոց լեզուն և քանի ոչդ լեզուն միմիպյն տաճարումն է պաշտօնապէս գործածուում ։ Հայոց եկեղեցին հայոց ազգութիւնից բաժանել անկարելի է ։ Հայաստանի եկեղեցին ուսումնասիրողը պիտի ուսումնասիրէ և հայոց ազգային պատմութիւնը ու լեզուն։

Ամէն աեզից նայում են այս հիմնարկութեանը և սպասում են՝ թէ սա պիտի առաջ մէկ հայոց գիտութիւնը բացատրէ հայոց անցեալը մաքրէ հայոց լեզուն ։ Ձեմարանից պիտի դուրս գտն հայագէտ ուսուցիչներ մեր ամէն աեզից գրացոնքների համար ։

Ահա ինչին է ծառայելու ձեմարանը. Աւաղ միայն որ ինքը ժողովաւրդ է դեռ լաւ չէ հասկանում այս հիմնարկութեան նշանակութիւնը. Կը հասնէ սա իր բոլոր նպատակներին թէ ոչ ապագան ցոյց կըտայ. Բայց այսօր՝ նայելով 15ամեայ անցեալին չեմ կարող զսպել սրտիս մէջ ուրախութիւնս արդէն այդտեղ եռ տեսնում եմ այդ ձգտումների իրագործումը. Այսօր ես հրճուանքով տեսնում եմ. որ ձեմարանը արդէն առւել է Ս. Էջմիածնին նոր գործիչներ. Խնքը Արքանապատիւ Ցեռուչը առաջինն էր. որը վճռողական քայլ արեց և այդ օրինակին հետևեցին ձեմարանի սանիկներից երեքը. 15 տարի ազգը սպասում էր անձնազհմարդկանց վերջապէս արժանանում է նրանց տեսնել. Գիտեմ՝ Ձեզ համար հեշտ չէր վճռել այս հարցը. Հեշտ չէր երիտասարդ հասակում թողնել աշխարհային կեանքի հրապարակով վայելքները բայց կայ արդեզք մէծութիւն առանց անձնազհմարդեան կայ արդեզք այժմ հասարակական բաղդաւորութիւն առանց անհատների անձնամոռացութեան. Հաւատացէք՝ այն մարդիկ որոնք իրանց սիրար կապել են ժողովրդի սրտի հետ որոնց համար զգալի է եղայրակցի ամէն մի վերը վեշտը. հաւատացէք՝ այդ մարդիկ երբէք անձնական երջանկութիւն չեն կարող ունենալ՝ մանաւանդ այնպիսի ազգի մէջ որի ամբողջ օրը գառնութեան որ է ամբողջ գիշերը՝

արտասուզի գիշեր, ԱՌ այժմ վանքի մէջ հայ սիրալ աւելի հանդիսա  
պիտի բարձախէ քան թէ աշխարհային կեանքում, Թոյլ առւելք ցանկալ  
2եղ յաջողութիւն ընտրած ճանապարհի վրայ Թոյլ առւելք 2եղ յայտնել  
որ Դուք մէնակ չէք, որ 2եղ շատերն են հասկանում, Թոյլ առւելք վեր-  
ջապէս եւ յուսալ որ 2եր օրինակը առանձնացած չի մնալ, որ 2եր  
կրտսեր ընկերներից շատերն էլ կը հետևեն 2եղ համոզուած լինելով  
որ այժմ միակ ասպարէզ որտեղ անմիջապէս կարելի է օգնել ամեն աեղի  
հայերին, այդ՝ անկախ հոգևորականի ասպարէզն է, Այս պարոններ, ա-  
ռանց անձնազիհութեան երբէք ոչ մի դործ չի կարող կատարուել.

Եւ տայ Աստուած որ 1901 թուականին, երբ կատարուելու է մեր  
քրիստոնէութեան 1600-ամեակը, առաջին րիստոնեայ ազդի յորելեանը, տայ  
Աստուած այդ թուականին Ճեմարանը տեսնէ իրան աւելի մօտեցած իւր  
նպատակներին, և մեզ ամէնքիս սիրելի Վեհափառ Տ. Մակար Սրբազնա-  
գոյն Կաթողիկոսի սիրտը ամրող ազգի սրտի հետ ուրախանայ, նկատե-  
լով թէ իզուր չեն անցել այն զոհարերութիւնները, որ նրանք արել են  
այս հիմնարկութեան համար, Ուրեմն սպասենք 1901 թուականին,

#### ԱՏԵՓԱՆ ԼԻՍԵԽԵԱՆԵՑ:

**1889թ. Սեպտեմբ. 30ին** Վազգութագործ մակարացոյ հմարութեան  
մասու պատճեն Յուրիստացիոն Ընտրութեան յանացաւը է յանու  
շաբաթական մեջն առաջարկադրանական դրամություն է բայց է բայց  
այսուհետեւ մայացնելու պահանջութակ առաջարկություն է պատճենի պար-  
ագա մայնեածեան է առաջարկադրանական մասու պատճենի պատճեն

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 15 սեպտ. ընդ  
համարաւ 470 յանուն բարեպաշտօն եղբարց Թումանեանց  
Դավրիժեցւոց՝ յարգելեացն Սարգսի, Զաքարիայ, մահտեսի Սի-  
մէոնի և Խաչատրոյ, որով օրհնէ զիեանս նոցին բորեպաշտու-  
թեանց և յայտնէ զգոհունակութիւն սրտի իւրոյ վասն կա-  
ռուցանելոյ ի սեպհականութենէ իւրեանց ի գաւթի Ս. Սար-  
գիս եկեղեցւոյ Հայոց Խլաւայ թաղին Դավրիժոյ զերկյարկեայ  
ընդարձակ և յարմարաւոր մեծածախս շինութիւն ի սեպհա-  
կանութիւն յիշեալ եկեղեցւոյն և ի կրթութիւն մանկանց  
Դավրիժաբնակ համազգեաց իւրեանց:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 18 սեպտ. ընդ հա-  
մարաւ 473, յանուն Սինօդի Ս, էջմիածնի, որով պատուիրէ